ՀՈՒՇԱԳԻՐ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ք. Երևան, 30 հունվարի, 2019թ.

Հայաստանի կայուն և թափանցիկ էներգետիկ զարգացմանն ուղղված քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կոալիցիան (այսուհետև՝ Կոալիցիա), ի դեմս Կոալիցիայի կառավարման խորհրդի նախագահ՝ «Էներգախնայողության աջակցության հիմնադրամի» գործադիր տնօրեն Աստղինե Պասոյանի (այսուհետ՝ Կողմ 1), որը գործում է կազմակերպության կանոնակարգի հիման վրա, մի կողմից, և «Արմենպրես» փակ բաժնետիրական ընկերությունը, ի դեմս ընկերության Արտաքին կապերի և զարգացման ծրագրերի ծառայության ղեկավար Միհրան Միրխավոյանի, (այսուհետ՝ Կողմ 2), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ միասին՝ Կողմեր), կնքեցին սույն հուշագիրը հետևյալի մասին.

1. ՀՈՒՇԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Սույն հուշագրով կողմերը նախատեսում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում համագործակցել հուշագրի 2-րդ մասով նախատեսված ուղղություններով՝ իրենց հնարավորությունների, միջոցների և փորձի կիրառմամբ:

2. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Սույն հուշագրով համագործակցության շրջանակներում Կողմ 2-ը պատրաստակամություն է հայտնում Կողմ 1-ին աջակցել՝ նրա Կանոնակարգից և Հռչակագրից բխող նպատակների իրագործման և Կոալիցիայի առջև դրված խնդիրների լուծման հարցում՝ այդ նպատակով իր հնարավորությունների սահմաններում ապահովելով.

2.1.1. Կողմ 1-ի կողմից կազմակերպվող համաժողովների, աշխատաժողովների, սեմինարների, կլոր սեղանների, դասընթացների, հանդիպումների, քննարկումների ըստ անհրաժեշտության լուսաբանումը:

2.1.2. Կողմ 1-ի գործունեության թիրախային մարզերում և համայնքներում Կողմ 1-ի կողմից կազմակերպվող և անցկացվող միջոցառումների մասին իր հնարավորությունների սահմաններում, ինչպես նաև օգտագործելով մարզերում թղթակցային ցանցի ներուժը, պատշաճ իրազեկել և լուսաբանել դրանք:

2.1.3. Իրականացնել թափանցիկ և կայուն էներգետիկ զարգացմանն ուղղված՝ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ աշխատանքներ:

2.2. Կողմ 1-ը պարտավորվում է սույն Հուշագրի 2.1 կետով նախատեսված աշխատանքների իրականացման ընթացքում Կողմ 1-ին տրամադրել անհրաժեշտ փաստաթղթեր, տեղեկություններ, այլ նյութեր, որոնք կնպաստեն վերոնշյալ աշխատանքների համակողմանի և պատշաճ լուսաբանմանը:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կողմերը պարտավորվում են ձեռնարկել բոլոր միջոցները սույն հուշագրով

համաձայնեցված ժամկետներում կատարելու համար: Սույն հուշագիրը Կողմերից ոչ մեկի համար ֆինանսական պարտավորություններ չի առաջացնում, բացառությամբ հուշագրի 4-րդ մասով նախատեսված դեպքերի:

4. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԸ

Կողմերն առանձին դեպքերում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխադարձ համաձայնությամբ սույն հուշագրի 2-րդ մասով սահմանված կոնկրետ ուղղությունների հետ կապված ծառայությունները կարող են իրականացնել դրանցից յուրաքանչյուրի համար նախատեսված ֆինանսական բնույթի գրավոր համաձայնագրերով՝ կախված այս կամ այն կողմի ուժերով իրականացվող աշխատանքների ծախսատարությունից:

5. ՀՈՒՇԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

5.1. Սույն հուշագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման օրվանից և գործում է անորոշ ժամկետով:

5.2. Սույն հուշագիրը կարող է վաղաժամկետ լուծվել կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ՝ ենթադրվող դադարեցման օրվանից ոչ ուշ, քան 1 (մեկ) ամիս առաջ մյուս կողմին գրավոր ծանուցմամբ:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն հուշագրով նախատեսված պարտականություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության 3 հետևանքով, որը ծագել է հուշագիրը կնքելուց հետո և Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են՝ երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն հուշագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել սույն հուշագիրը՝ այդ մասին նախապես տեղեկացնելով մյուս Կողմին:

7. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

Սույն հուշագրի և դրա հիման վրա Կողմերի միջև կնքվող առանձին համաձայնագրերի կատարման ընթացքում առաջացած վեճերն ու տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

8. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1. Սույն հուշագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ և համարվում են դրա անբաժանելի մասը:

8.2. Սույն հուշագրով ստանձնած պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կողմերը կրում են պատասխանատվություն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

8.3. Սույն հուշագրով չնախատեսված հարցերը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

8.4. Սույն հուշագիրը կնքված է հայերեն լեզվով, հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կողմ 1
«Էներգախնայողության աջակցության հիմնադրամ»
հասցե՝ 26/1 Վ. Սարգսյան փ, գրասենյակ 414, Երևան 0010, ՀՀ
հեռ.՝ (+374) 93 611619
Տնօրեն՝ Աստղինե Պասոյան

Կ.Տ.

Կողմ 2
Արմենպրես» ՓԲԸ
ՀՎՀՀ՝ 01506041
Հասցե՝ ք. Երևան, 0002, Սարյան 22
Հեռ.՝ +37410539818
Արտաքին կապերի և զարգացման ծրագրերի ծառայության ղեկավար՝ Միհրան Միրխավոյան

Կ.Տ.